ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ար.մեդտեխնիկա ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2026/16-11-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	մակնիշը	տեխնիկական բնութագիրը
12	Tellyes	DefibReady, TYE6120	Սիմուլյացիոն Դեֆիբրիլյատոր նախատեսված է բժշկական և բուժքույրական ուսանողների, ինչպես նաև առաջնային բուժօգնություն տրամադրող այլ մասնագետների համար՝ ապահով, վերահսկելի և բարձր իրատեսական ուսուցողական միջավայր ստեղծելու նպատակով: Այն պետք է հնարավորություն տա իրականացնել ձեռքով արտաքին դեֆիբրիլացիա, ավտոմատ արտաքին դեֆիբրիլատորի (AED) կիրառություն, պեյսինգ և մոնիթորինգի գործառույթների իրականացում: Առնվազն հետևյալ հմտությունների ուսուցում՝ Դեֆիբրիլյացիայի գործողություն Խթանման/պեյսինգ գործողություն Մոնիտորինգային գործողություն Պետք է ունենան իրական դեֆիբրիլատորին գրեթե նույնական արտաքին տեսք: Բարձր լուծաչափով սենսորային էկրանի առկայություն՝ պարամետրերի ցուցադրման և կարգավորման համար: Կարգավորման կոճակներն պետք է գործեն ինչպես իրական դեֆիբրիլատորի դեպքում: Էներգիայի կարգավորում «+»«-» կոճակներով Սիմուլյացիոն դեֆիբրիլյատորի միջոցով կարող են իրականացվել Լիցքավորման և լիցքաթափման

			գործողությունները Դեֆիբրիլյացիայի էներգիայի ընտրություն Չի կիրառում բարձր լարման հոսանք, ապահովելով մշտապես անվտանգ աշխատանք օգտագործողների համար: Պետք է հասանելի լինեն առնվազն 4 ռեժիմներ, այդ թվում՝ Մոնիտորի ռեժիմ, AED ռեժիմ, Մանուալ դեֆիբրիլյացիայի ռեժիմ, Խթանման(Pacing) ռեժիմ Պետք է ունենա լիցքավորման կոճակ, և լինեն լիցքավորման ձայնային էֆեկտներ ինչպես իրական դեֆիբրիլյատորի դեպքում: Կոճակ՝ 2 րոպեանոց ահազանգային դադարի համար: Հնարավոր է սեղմել այն Մոնիտորի ռեժիմում, ահազանգի լույսը և ձայնը պետք է անջատվեն, բայց ազդանշանը կշարունակի թարթել էկրանին: Մենյուի կոճակ՝ տագնապի, ոչ ինվազիվ արյան ճնշման(NIBP) կարգավորման և գրանցամատյանի(log) դիտարկման համար մոնիթորինգի ռեժիմում Ահազանգի ձայնային և ահազանգի լուսային էֆեկտների տարբեր մակարդակներ: Իրատեսական դեֆիբրիլյացիոն էլեկտրոդների առկայություն՝ ճիշտ դիրքի տեսողական հիշեցմամբ: Դեֆիբրիլյացիոն էլեկտրոդների (paddles) վրա կոճակների առկայություն՝ էներգիայի կարգավորման, լիցքավորման և լիցքաթափման արագ գործարկման համար: Էլեկտրոդի դիրքի ավտոմատ հայտնաբերում, ճիշտ տեղադրումը պետք է առաջացնի բռնակի թրթռում (վիբրացիա) լիցքաթափման ընթացքում: Դեֆիբրիլյացիոն էլեկտրոդները կարող են հանվել չափի փոփոխման համար՝ մեծահասակների և երեխաների օգտագործման միջև: ԱԷԴ ռեժիմում էլեկտրոդների (pads) միացման ավտոմատ հայտնաբերում: Ընկնելու դեպքում ձայնային ազդանշանի առկայություն: Համալրում՝ 5-ուղիանի մալուխ, պուլսօքսիմետրիա, ոչ-ինվազիվ արյան ճնշման (NIBP) մանժետ, մալուխային ջերմաստիճանի տվիչ և CO2 նմուշառման կանյուլա: Աքսեսուարների միացումը իրականացվում է նույն կերպ, ինչպես իրական դեֆիբրիլյատորի դեպքում. 5-ուղիանի ԷՍԳ-ի անջատման հայտնաբերում: Պուլսօքսիմետրիայի անջատման հայտնաբերում: Իրական NIBP մանժետ օդով լցմամբ և օդի բացթողմամբ՝ լսելի ձայնային ազդանշանով: Արտաքին սնուցման աղբյուրի և ներկառուցված մարտկոցի առկայություն:

			Ներկառուցված մարտկոցի լրիվ լիցքավորումը պետք է ապահովի առնվազն 8 ժամյա օգտագործում: Դեֆիբրիլյացիոն բաճկոն՝ Կարող է կրել սիմուլյացիոն հիվանդը (SP) կամ մանեկենը: Ապահովում է միացում 5-ուղիանի ԷՍԳ-ի: Ապահովում է դեֆիբրիլյացիոն էլեկտրոդների և բարձիկների օգտագործումը: Կառավարման համակարգ՝ · ԷՍԳ-ի, EtCO2-ի, Pleth-ի, HR-ի, RR-ի, SpO2-ի, NIBP-ի և այլնի մոնիթորինգ: · Կարգավորվող ԷՍԳ ուղիներ և ուժեղացումներ ՝ ուժեղացման միջակայքերը ոչ պակաս, քան ՝ ×1/4, ×1/2, ×1, ×2, ×4 · Պետք է հասանելի լինի NIBP-ի ավտոմատ և ձեռքով չափում · Սառեցման և տվյալների դիտման գործառույթները հասանելի են Մոնիտորի ռեժիմում, կարող են ցուցադրվել թրենդների գրաֆիկները և NIBP տվյալները · Հնարավոր է կարգավորել ահազանգերը՝ երբ պարամետրը գերազանցում է իր ահազանգման միջակայքը, ահազանգերի գրանցամատյանները(logs) պետք է գեներացվեն ավտոմատ կերպով · Դեֆիբրիլյացիայի էներգիան պետք է հնարավոր լինի կարգավորել, ցուցադրվում է ընթացիկ էներգիայի արժեքը: · Լիցքավորման ավարտից հետո պետք է լինի ձայնային հուշում · Պետք է ցուցադրվեն էլեկտրական շոկերի կուտակված ընդհանուր քանակը և վերջին շոկի էներգիան: · Սինխրոնացված կարդիովերսիայի ռեժիմում էկրանին պետք է հայտնվի «Սինխրոնիզացիա» · ԷՍԳ ալիքի ձևերը փոխվում են հաջող դեֆիբրիլյացիայից հետո · AED-ի ամբողջական գործընթացային ուսուցում · AED ձայնային և տեսողական ուղեցույց · Սրտի ռիթմի վերլուծություն՝ էլեկտրական շոկ կատարելու անհրաժեշտությունը նշելու համար · Մետրոնոմը պետք է հասանելի լինի Սիրտ-թոքային վերակենդանացման գործողության համար · Կարգավորելի ՍԹՎ ռեժիմներ և տևողություն · Ըստ պահանջի և ֆիքսված պեյսինգ · Վեբ-հիմքով հրահանգչի ծրագրակազմի առկայություն · Պետք է հնարավոր լինի սկանավորել QR կոդը ՝ դեֆիբրիլյատորի միացման և կառավարման համար Ներկառուցված առնվազն 16 դեֆիբրիլյացիայի և պեյսինգի դեպքեր, ներառյալ մեծահասակների և երեխաների դեպքեր, ինչպիսիք են Նախասրտերի

			ֆիբրիլյացիան (Atrial Fibrillation), Փորոքային ֆիբրիլյացիան (Ventricular Fibrillation), Սրտի կանգը, Սրտի խթանումը (Pace-making), տախիկարդիան · Ուսուցչի ծրագրակազմը պետք է ցուցադի դեպքի ընթացքը և ձեռքով հնարավոր լինի կառավարել դեպքը · Վերակենդանացման գործընթացը բարելավելու նպատակով հասանելի են համապատասխան դեղամիջոցներ։ · Պետք է համապատասխանում լինի AHA 2020 ուղեցույցներին · Ծրագիրը կարող է ցուցադրել կենսական պարամետրեր, ներառյալ ԷՍԳ, սրտի զարկերի հաճախականություն, EtCO2, շնչառության հաճախականություն և այլն։ · Գործողությունների գրանցամատյանները/լոգերը կարող են ստեղծվել ավտոմատ կերպով և ցուցադրվել հրահանգչի ծրագրում։ · Դեպքի արդյունքը կարող է լինել՝ փրկված, մահացած կամ բուժումը դադարեցված։ Քաշը ոչ ավել, քան՝ 10 կգ Համալրում՝ Դեֆիբրիլյատոր – 1 հատ CO2 նմուշառման կանյուլա – 1 հատ 5-ուղի մալուխ – 1 հատ Պուլսային օքսիմետրի տվիչ – 1 հատ Ոչ ինվազիվ ճնշման չափման մանժետ- 1 հատ Մարմնի ջերմաստիճանի տվիչ – 1 հատ Երաշխիքային ժամկետը՝ մատակարարման պահից սկսած առնվազն 12 ամիս: Ապրանքը նոր է և չօգտագործված:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ар.Медтехника ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2026/16-11-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	марка	технические характеристики
12			